ՄԱՆԿԱՏԱՆ ԲԱԿՈՒՄ

«ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆ ՄԱՆԿԱՆՑ»

ԾԱՂԿԱՁԱՐԴԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ

Ապրիլի 9-ին՝ Ծաղկազարդի տոնին, Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Նոր Խարբերդի հատուկ մանկատուն: Ծաղկազարդի տոնը Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ հռչակված է նաև մանուկների օրհնության օր: Այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց մանկատան 240 սաներին, ովքեր զրկված են եկեղեցական արարողություններին մասնակցելու հնարավորությունից:

Մանկատանը Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարար Աղվան Վարդանյանը, մանկատան տնօրեն Հարություն Բալասանյանը, մանկատան աշխատակազմը: Նրանց ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը նախ այցելեց այն մանկասենյակները, որոնց փոքրիկ բնակիչները տեղաշարժվելու հնարավորություն չունեն: Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց բոլոր երեխաներին՝ ընծայելով նրանց փոքրիկ խաչեր:

Տոնի առիթով կազմակերպվել էր նաև փոքրիկ հանդիսություն, որի ընթացքում Հայոց Հայրապետին ողջունեց մանկատան տնօրենը՝ նշելով, որ Հայրապետական օրհնությունն օգնելու է երեխաներին՝ իրենց ֆիզիկական դժվարությունները ավելի հեշտությամբ տանելու:

Հանդիսության ընթացքում մանկատան երեխաներին համերգային ծրագրով ողջունեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀԲԸՄ-ի Նոր Նորքի Հայորդյաց տան սաները: Հյուրերին իրենց երաժշտական ունակությունները ցուցադրեցին նաև մանկատան սաները:

«Մենք ցանկություն ունեցանք այցելելու Խարբերդի մանկատուն, որովհետև գիտեինք, որ այստեղ ունենք հարազատ զավակներ, ովքեր հնարավորություն չունեն Եկեղեցու արարողություններին մասնակից դառնալու և Եկեղեցու ու հայ հոգևորականի օրհնությանն արժանանալու: Եկանք, որպեսզի ավելիով բերենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայ Եկեղեցու օրհնությունը այս հարկի ներքո բնակվող Մեր զավակներին»- ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց մանկատան ողջ պաշտոնեությանը: *«Մենք գիտենք, սիրելիներ, որ Քրիստոսի քարոզության առանցքային գաղափարը սիրո գաղափարն է, գիտենք, որ Աստված սիրով արարեց աշխարհը և այդ սիրուց առաջնորդված մարդու փրկության համար Իր Որդուն ուղարկեց աշխարհ: Սերը գերագույնն է Աստուծո տնօրինության մեջ, սերը գերագույնն է մարդկային կյանքում»*,- նշեց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով, որ Տերը զորացնի մանկատան սպասավորներին, պարգևի անհուն սեր ու համբերություն, որպեսզի կարողանան իրենց հոգու ջերմությունը փոխանցել երեխաներին և թեթևացնել կյանքից նրանց հասած հարվածները:

Հանդիսության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց մանուկների օրհնության կարգ:

Հայորդյաց տան սաներն իրենց հասակակիցներին բաժանեցին նախապես պատրաստված նվերները: